

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՍՈՒՐԲ ՏԱԹԵՎ ԵՎ ՆՈՐԱՎԱՆՔ

Տարիներից ի վեր հոգևոր ճեմարանում ավանդույթ է դարձել, որ ուսանողները ամավերջի քննություններից և հանդեսից հետո, դասախոսական կազմի հետ միասին, մեկնում են չորսօրյա պտույտի, դեպի Հայաստանի նշանավոր վանքերն ու եկեղեցիները, պատմական այլ կառույցներ ու տեսարժան վայրեր: Հայաստանի տարածքում հայտնի են 4.000-ից ավելի հին ճարտարապետական հուշարձաններ, որոնց վերականգնման համար պետությունը ամեն տարի հատկացնում է հսկայական գումարներ:

Այս տարի շրջապտույտի համար որոշվել էր հետևյալ ուղերթը՝ Սիսիան—Գորիս—Տաթև—Եղեգնաձոր:

Պատմական Սյունյաց աշխարհի այս նշանավոր վայրերը մեր առջև պետք է բաց անեին մեր դարավոր մշակույթի ու հավատքի վառ օջախները՝ իրենց անցյալի ամենափայլուն էջերով, անցյալ, որի ցանած սերմերն այսօր հնձում է նաև մեր վերածնված մայր հայրենիքը:

Հունիսի 12-ին, ամառային մի պայծառ առավոտ, որին մենք ուսանողներս սրտի տրոփյունով էինք սպասում, արևը դեռ նոր էր արձակել իր առաջին ճառագայթները, երբ մենք մեկնեցինք Մայր Աթոռից:

Մայր Աթոռի մեքենաները դուրս եկան վանքի դարպասներից: Մենք որքան հեռանում էինք Մայր Աթոռից, այնքան ավելի վեր էին խոյանում տաճարի գմբեթները, որոնք կարծեք ցանկանում էին հսկել մեզ որպես արթուն պահակ:

Մեքենաների անիվները հազիվ էին սկսել կատարել իրենց առաջին պտույտները, երբ ուսանողները սկսեցին երգել ինչպես հոգևոր, այնպես էլ ազգային ու հայրենասիրական երգեր, մանավանդ «Առաւօտ լուսոյ» սքանչելի շարականի երգեցողությունը, որի հետ մեկտեղ կարծես արևը «առ մեզ» էր լույս ծագում և աստիճանաբար իր ամենօրյա ճանապարհով դեպի հորիզոն բարձրանում՝ լուսավորելու Հայաստանի բնաշխարհը:

Քիչ անց մենք արդեն անցնում էինք դեպի Արտաշատ տանող մայրուղով, որտեղից շուրջ կես ժամ մեր առջև բացվում էր մի գեղեցիկ տեսարան՝ Արարատը իր սպիտակափառ գագաթներով, որոնք «պատված էին ձյունի պես ճերմակ մշուշով»: Իսկ Արարատյան հայրենական դաշտերում եռում էր գյուղի աշխատավորի ազնիվ և օգտակար աշխատանքը:

Շուտով հեռվում, Արարատի ֆոնի վրա, երևաց ԺԳ դարի նշանավոր դպրոց-վանքերից մեկը՝ Խորվիրապի վանքը, շրջապատված բարձր պարիսպներով: Այն հիմնադրվել է նույն դարի նշանավոր իմաստասեր, անվանի մատենագիր և մանկա-

վարժ Վարդան վարդապետ Արևելցու կողմից:

Արևը հորիզոնում փայլատակում էր արդեն, երբ մենք հասանք բանաստեղծ Պարույր Սևակի ծննդավայր Սովետաշեն գյուղ, որտեղ հայրենի տան բակում հանգչում է Մեծ Հայորդու աճյունը:

Երախտագիտությամբ և խորունկ հարգանքով լցված շրջապատում ենք մեծ բանաստեղծի գերեզմանը: Ի հարգանս նրա՝ հոգեհանգստյան պաշտոն կատարելուց և գերեզմանին թարմ ծաղիկներ դնելուց հետո, շարունակում ենք մեր ճանապարհը:

Առաջին օրը մեր անցնելիք ճանապարհը բավականին երկար էր, ուստի մենք ճանապարհին շատ կանգ չառանք: Մեր ճանապարհն անցնում էր ոլորապտույտ ուղիներով, Արփայի անդնդախոր ձորերով և գնալով ավելի էր բարձրանում ծովի մակերևույթից, և մենք Էջմիածնից արդեն գտնվում էինք բավականին բարձրության վրա: Լեռնային զով քամին մեքենաների պատուհաններից համբուրում էր մեր դեմքերը և, հագեցնելով թարմ օդով, առանձին բարմություն ներարկում մեզ:

Նորից երգեր, կատակներ...

Հմայվելով հայրենի բնաշխարհի գեղեցկությամբ, հեռվում ամպերի մեջ մխրճված բարձր լեռնագագաթներով ու հեքիաթային կիրճերով, զգացինք, թե ինչպես հասանք Սիսիանի շրջանում գտնվող Հայաստանի միակ Շաբիի ջրվեժին:

Մենք որքան մոտենում էինք ջրվեժին, այնքան ավելի էինք հմայվում նրանով: Մոտ 25 մետր բարձրությունից թափվող ջուրը, բախվելով քարերին, առաջացնում էր փիրուզագույն փրփրադեզ ալիքներ և շարունակում իր ճանապարհը: Տղաներից շատերը լողացան անմիջապես բարձունքից թափվող ջրի տակ, ոմանք մագլցեցին ջրվեժի վերին մասը, իսկ մի մասն էլ բավարարվեց ներքևից դիտելով ջրվեժը:

Հակառակ ջրվեժի մոտ երկար մնալուն, այնուամենայնիվ տղաները չէին ուզում հեռանալ, այնքան որ հիացած էին նրանով:

Ջրվեժից քիչ հեռու, գետի ձախ ափին, ճաշելուց և հանգստանալուց հետո, մենք ուղևորվեցինք դեպի Որոտանավանք, ուր հասնելուն պես, տղաները սկսեցին իրենց որոնումները: Վանքը եկեղեցիներից բաղկացած մի համակառույց է, որն այժմ երկրաշարժի պատճառով գտնվում է ավերակ վիճակում: Վանքի բակում կան բազմաթիվ գերեզմաններ:

Եկեղեցիներից մեկը, որը կրում է ս. Ստեփանոսի անունը, կառուցվել է 1000 թվականին, Սյունյաց Շահանդուխտ թագուհու հրամանով: Մյուսը՝ ս. Կարապետ անունով, Շահանդուխտ թագուհու որդի Սնադայի կողմից, 1007 թվականին: Իսկ երրորդ՝ ս. Գրիգոր եկեղեցին, նույն ԺԱ դարում, բայց ում կողմից՝ հայտնի չէ: Եկեղեցիները, հիշտ է, գտնվում էին ավերակ վիճակում, բայց պահպանվածով հանդերձ մի ներքին համաչափություն կար նրանց միջև, որը մի տեսակ ճարտարապետական սիմֆոնիա էր կազմում:

Եկեղեցիներից մեկի պատերին պահպանվել էին գեղեցիկ որմնանկարներ, որոնց գույները փոքր ի շատե խամրել էին անձրևների պատճառով, սակայն եղածով այն գալիս էր վկայելու ԺԱ դարի մեր որմնանկարչության արվեստի զարգացման բարձր մակարդակը՝ գույների ներդաշնակ և զուսպ գործածումով: Եկեղեցիների պատերին կային ձեռով պարզ և անպաճույճ բարձրաքանդակներ, որոնք խոսուն վկաներն էին ժամանակի քարարվեստի: Քարը ենթարկվել է հայ շինականի ստեղծագործ ձեռքին, ձևափոխվել, դարձել արծիվ (հատց լեռնաշխարհի այդ հպարտ թռչունը ևս է բաջության, անկախության խորհրդանշան), դարձել նուռ՝ խորհրդանշելով հայ ժողովրդի ստեղծագործ մտքի թռիչքը և դարերի խորքը մխրճված նրա հին արմատը:

Վանքը դիտելուց և խմբովին «Տէր ողորմեա» ու «Տէրունական աղօթք» երգելուց հետո, պատրաստվեցինք մեկնման:

Արդեն երեկո էր: Արևն իր տեղը աստիճանաբար զիջում էր լուսնին: Հորիզոնում նշմարելի էր խորհրդավոր մայրամուտը:

Այնուհետև մենք նստեցինք մեքենաներ և ուրախ երգերով ուղևորվեցինք դեպի Սիսիան՝ հյուրանոցում գիշերելու համար:

Երեկոյան առիթ ունեցանք շրջելու Սիսիանում: Պետք է ասել, որ Սիսիանը մի նորակառույց, երիտասարդ քաղաք է, հագիվ երկու տասնամյակ պատմությամբ: Քաղաքը Որոտան գետով բաժանված է երկու մասի, միացված՝ գեղեցիկ կառուցված կամուրջով, որի վրայով անցնելիս գետի աղմուկը առանձին հաճույք էր պատճառում բոլորիս, նմանվելով դաշտերում գյուղի աշխատավորի զվարթ երգին: Ուշ երեկոյան գնացինք հյուրանոց քնելու:

Երեքշաբթի առավոտյան դանդաղկոտ խոնավ արևը, մրափողի նման հազիվ քնից արթնացել, կիսախուփ աչքերով գիշերն էր փնդռում փողոցներից, երբ մենք արդեն պատրաստ էինք մեկնման:

Վաղ առավոտից արդեն տղաները ցրնծության և ուրախության մեջ էին: Այդ օրը պետք է այցելեինք միջնադարյան հայ մշակույթի բաբախող սիրտը հանդիսացող Տաթևի վանք և փառաբանության աղոթք

մատուցեինք մեր տիեզերալույս և եռամեծ վարդապետների անմահ ժառանգությանը և համբուրելու նրանց մտքի արգասիքը հանդիսացող յուրաքանչյուր ավանդ:

Ժամը 9.30-ին մենք արդեն Սիսիանի ս. Հովհաննես եկեղեցու բակում էինք: Սյունիվանքի տաճարը, Սյունյաց աշխարհի այս հոյակապ հուշարձանը, իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով պատկանում է Հայաստանի կենտրոնագմբեթ տաճարների (ս. Հռիփսիմե) տիպին: Այն կառուցվել է Է դարի երկրորդ կեսին: Բազալտաշերտ այս տաճարը, պարզ ու արտահայտիչ ձևերով, հատակագծային ու ծավալային հորինվածքի փոխադարձ ներդաշնակությամբ հարազատ է վաղ միջնադարյան հայկական եկեղեցական ճարտարապետական ոգուն, ըստ ճարտարապետների մասնագիտական վկայության:

Եկեղեցին հետաքրքրությամբ դիտելուց և առավոտյան ժամերգություն կատարելուց հետո, ուղևորվեցինք դեպի Տաթև: Դարձյալ ոլորապտույտ ճանապարհներ, անհատակ ձորեր, չորս կողմը վերձիգ և անմատչելի ժայռեր, ահռելի, բայց միաժամանակ հոյակապ տեսարաններ էին բացվում մեր առաջ:

Թեթև մշուշը բամբակի մաքուր ծվեններ ի պես իջել, ծածկել էր Որոտանի կիրճը: Նախքան Որոտանի ձորը իջնելը, որտեղից օձագալար ճանապարհներով պետք է բարձրանայինք Տաթև, մենք հանգստանալու համար կանգ առանք այն տեղում, որտեղ 1903 թվականին Խրիմյան Հայրիկը, ձիով Տաթև գնալիս, կանգ է առել և հանգըստացել: Երեք քառորդ դար (75 տարի) է անցել այդ օրից, սակայն այսօր էլ այդ տեղը շատ-շատերի համար դարձել է ժամանակավոր հանգստի վայր, որտեղ այժմ կանգնեցված է մի հուշարձան՝ հավերժացնելու համար Հայրիկի հետ կատարված այդ իրողությունը:

Հայրիկի կյանքի ու գործունեության հետ կապված պատմական որոշ դեպքեր հիշելուց, դրանց շուրջ զրուցելուց և քիչ հանգըստանալուց հետո, շարունակեցինք մեր ճանապարհը՝ զառիվայր իջնելով: Քառորդ ժամից արդեն «Սատանայի կամուրջ»-ի մոտ էինք: Այն դիտելուց և մեծ բավականություն ստանալուց հետո, տղաներից ոմանք լողացան գետնաբուխ հանքային ջրով լցված ավազանում: Պետք է ասել, որ «Սատանայի կամուրջ»-ը բնակերտ մի կառույց է, վերևից ներքև կախված սյուներով, որը շատ ապշեցրեց մեզ: Այն կերտել էին Որոտանի հորդառատ հորձանուտները, գարնան ձնահալքի պատճառով գետի վարարման ժամանակ:

10 րոպեից մենք արդեն մեքենաներում էինք և ուրախ ու զվարթ երգերով բարձրանում էինք դեպի Տաթև: Վանքը կարծես հեռվից մեզ էր կանչում: Կեսօր էր, երբ հասանք վանք, որի ավերակները լուսավորվել էին ջինջ երկնքում փայլատակող արևի բարկ ճառագայթներից: Վանքի յուրաքանչյուր քար, որոնցից ամեն մեկը իր պատմությունն ուներ, կարոտով կանչում էր մեզ՝ լսելու համար մեր աղոթքը առ Աստված:

Ամեն կողմ վեհություն ...

Ամեն կողմ խորհուրդ ...

Ամեն քայլափոխի՝ մի գեղեցկություն: Ամեն մի կտոր քարի վրա դրոշմվել է հայ ժողովրդի մտքի, հոգու, սրտի և ձեռքերի մեռնաբույր գեղեցկությունը: Այդ քարը լեզու է առել հայ ճարտարապետի ձեռքերում և այսօր մեզ է պատմում հայ ժողովրդի՝ վաղեմի մշակույթի զարգացման և բարձր մակարդակի մասին:

Երկյուղածությամբ համբուրում ենք սրբաքարերը՝ ստանալու համար շնորհ և զորություն:

Տաթևի վանքը անտարակույս բացառիկ տեղ է գրավում միջնադարյան Հայաստանի վանքերի շարքում, որը, ըստ Ստ. Օրբելյանի վկայության, «Լի էր և ծովամատոյց փիլիսոփայիք, երաժշտական երգոց: Ճոխ էր և վարժատան դպրոցացն վարդապետական կրթութեամբ նաև արուեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»:

Սկսած Թ դարից Տաթևի վանքը հանդիսացել է Սյունյաց աշխարհի կարևորագույն հոգևոր կենտրոնը: Այստեղ էին հավաքվել բազմաթիվ ձեռագրեր, իշխանական վավերագրեր ու փաստաթղթեր: Այստեղ ապրել ու գործել են հայկական միջնադարի հոգևոր մշակույթի շատ նշանավոր դեմքեր, որոնցից են Հովհաննես Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Թովմա Մեծոփեցին, Առաքել Բաղիշեցին, Հովհաննես Կոլոտիկ և շատ ու շատ ականավոր երախտավորներ: Տաթևի դպրոցը, որը կոչվել է «Գլուխն ամենեցունց վանօրէից և աղբիւր շնորհաբաշխութեան Տանն Սիսական», «Երկրորդ Աթէնք ի մէջ հայոց» կամ «Մեծամեծ հեղինակաց բնակարան», եղել է գիշերօթիկ դպրոց, շուրջ 200 աշակերտներով, և ունեցել է երեք «ուսումնարաններ» կամ ֆակուլտետներ՝ երաժշտական, նկարչական, աստվածաբանական-փիլիսոփայական:

Տաթևի վանքը ճարտարապետական խոշոր համալիր է, որը գտնվում է Որոտանի

անդնդախոր կիրճով սահմանազատված մի խիստ անառիկ դարավանդի վրա և արևմտյան ու հյուսիսային կողմերից շրջապատված է ամուր պարիսպներով: Վանքի կառույցների խումբը բաղկացած է երեք եկեղեցիներից, սեղանատնից, գրատնից, դամբարանից, շտեմարաններից, վանական սենյակներից և պաշտոնական այլ կառույցներից: Վանքի գլխավոր եկեղեցին, որ ս. Պողոս-Պետրոս անունն է կրում, կառուցված է Հովհաննես եպիսկոպոսի օրոք, Շուշան իշխանուհու հովանավորությամբ, 885—906 թվականներին: Զգալի չափերով երկայուն կենտրոնագմբեթ մի կառույց է՝ հովհարաձև գմբեթով: Ներսի պատերին ուշագրավ են որմնանկարներ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ բազիլիկատիպ եկեղեցին նմանապես կառուցված է եղել նույն դարում, 848 թվականին, սակայն ավերվելով 1138 թվականի երկրաշարժի ժամանակ, այն հիմնովին վերանորոգվել է վանքի առաջնորդ Հայրապետ եպիսկոպոսի օրոք (1274 թ.):

Տաթևի վանքի երրորդ՝ ս. Աստվածածին եկեղեցին կանգնեցված է երկու վերոհիշյալ եկեղեցիներից դեպի հյուսիս, վանքի դարպասի վրա: Վերջինս երկրաշարժի պատճառով ավերվելուց հետո, այժմ վերակառուցվել է: Դատելով սրա ճարտարապետական ձևերից՝ Ժ—ԺԱ դարերի հուշարձան է: Պատկանում է կենտրոնագմբեթ տիպին, հովհարաձև գմբեթով:

Վանքի ուշագրավ և հայ ճարտարապետության եզակի կոթողներից է 15 մետրանոց Տաթևի ճոճվող սյունը՝ կառուցված 885 թվականին: Ավանդության համաձայն այս սյան տակ արժանավոր և գիտուն հոգևորականներին տվել են վարդապետական գիտական աստիճան:

Հերոսական այս լեռնաշխարհի դյութիչ բնության հետ մերված ու կարծես նրա անբաժան մասը կազմող Տաթևի վանքի բարձրարվեստ հուշարձանները զգալիորեն ավերվել են 1931 թվականին, ուժեղ երկրաշարժի ժամանակ:

Ուրախությամբ պետք է նշել, որ այսօր հայրենի պետության միջոցներով վերակառուցվում է պատմական այդ նշանավոր հուշարձանախումբը: Որոտանի կիրճում, համանուն գետի աջակողմյան ափին, գտնվում է Տաթևի կամ Սյունյաց Անապատը (համալսարանը), շրջապատված բարձր պարիսպներով: Հատկանշական է այն, որ այստեղ է նախապատրաստվել Տաթևի դպրոցի բացումը, որը կոչվել է նաև «Յիսուսական համալսարան»:

Տաթևում երկար մնալուց և ճաշելուց հետո ինչպես հոգեկան, այնպես էլ գեղագիտական մեծ բավականություն ստացած մեկ անգամ ևս մեր աչքերով գրկում ենք վանքը, նրա հուշարձանների ամբողջ խումբը, որ ճարտարապետական քարեղեն մի համանվագ-սիմֆոնիա է, և երեկոյան դեմ ծնրադրելով ու համբուրելով հազարամյա վանքի սուրբ քարերը և մեր եռամեծ վարդապետների նվիրական շիրիմները, հրաժեշտ առնելով ուղևորվում ենք դեպի Գորիս:

Անդորրը համակել էր Սյունյաց աշխարհը: Լսվում էր միայն թռչունների դայլայլը և մեղմ զեփյուռից օրորվող ծառերի տերևների սոսափյունը:

Գորիս չհասած հետաքրքիր էր քաղաքի դիտումը վերևից, որը արդիական քաղաքաշինական ոճով կառուցված մի քաղաք է:

Ուշ երեկոյան երբ հասանք Գորիս, հոգնած լինելու պատճառով անմիջապես գնացինք հյուրանոց հանգստանալու, որովհետև հաջորդ օրը մեզ մեծ հոգնություն էր սպասում:

Այդ օրը նախ եղանք Հին Գորիսում, որը գտնվում է Հայաստանի հարավային մասում՝ Զանգեզուրի շրջանում, ներկա Գորիսից փոքր ինչ արևելք: Գորիսը հուշակավոր էր իր հազարավոր ժայռատներով: Քսենոֆոնը իր «Նահանջ բիւրոց»-ի մեջ (401 թվ. Ն. Ք.) խոսում է Գորիսի և Խրնձորեսկի հաների մասին, որոնք բնակվում էին այդ տներում: Իսկ այսօր, հինավուրց այդ բնակավայրը դարձել է Հայաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Հին Գորիսը դիտելուց հետո մենք ուղևորվեցինք դեպի պատմական Խնձորեսկ գյուղ, որի գերեզմանատանը ամփոփված է Հայաստանի ազգային-ազատագրական շարժման նշանավոր դեմքերից մեկի՝ Մխիթար Սպարապետի անյունը: Գյուղը, նորից ժայռատներով, գտնվում էր ձորի մեջ, որտեղ կային երկու եկեղեցիներ, որոնք ճանապարհի դժվարանցանելիության պատճառով դիտեցինք հեռվից: Խնձորեսկին կամ ընդհանրապես Զանգեզուրին են պատկանում անցյալի հերոսական պատմության բազմաթիվ էջեր, որոնք գրված են սրով և արյամբ:

Հեռվից Սպարապետի գերեզմանին ծրնրադրելուց, նրա հերոսական ու հայրենանվեր գործունեությունը վերհիշելուց հետո, շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Եղեգնաձորի շրջան:

Դարձյալ երկար ու ձիգ ճանապարհներ... երգ ու կատակ, խաղ ու ծիծաղ:

Ժամերն անցնում են աննկատ, «թռչում է ժամանակը ինչպես սամում»:

Մեքենաները սլանում են Արփայի եր-

կայնքով, իսկ մեր միտքը սավառնում՝ հայ ժողովրդի պատմության միջով:

Հետմիջօրեի արդեն Եղեգնաձորի շրջանում էինք: Եղեգիսում հանգստանալուց հետո, ճանապարհվեցինք դեպի Ցախաց Քարի վանք, որը գտնվում էր մի դժվարամատչելի լեռան գագաթին: Մեծ դժվարությունների հանդիպեցինք լեռը բարձրանալիս: Սագլցում ենք ժայռերն ի վեր, երբեմն հետս ընկրկում, բայց միշտ առաջանում ենք հաղթահարելով ամեն մի դժվարություն:

Մեկ ժամում բարձրացանք լեռան գագաթը, որտեղից հեռվում երևաց վանքը՝ շրջապատված խարխլված պարիսպով: Մոտենալով վանքին տղաները սկսեցին իրենց հերթական որոնումները: Վանքի ս. Կարապետ եկեղեցին կառուցվել էր 1041 թվականին, որը միջնադարյան Հայաստանի եկեղեցական ինքնատիպ շենքերից է: Այն պատկանում է գմբեթավոր սրահ կոչվող տիպին: Չորս անկյուններում ունի ավանդատներ: Ընդհանուր առմամբ պարզ ու արտահայտիչ: Արտաքին ճարտարապետության մեջ մի առանձին թարմություն են մտցնում ճակատներին տեղավորված բարձրաքանդակները և լուսամուտների քանդակազարդ լայն երեսակալները:

Մյուս եկեղեցին, որ կառուցվել է գրեթե նույն ժամանակաշրջանում, աչքի է ընկնում իր աննախօրինակությամբ, արևմտյան ճակատին երկու մեծ և գեղեցիկ խաչքարերով ու առաստաղի բացառիկ զարդաքանդակներով:

Վանքից հարավ՝ հանդիպակաց լեռան վրա էր գտնվում և կարծես եկեղեցին էր հսկում Սմբատաբերդը, որը երկնաքեր ժայռին ձուլված Սյունիքի անառիկ ու խոշոր ամրոցներից մեկն է: Երեք կողմից ձորի բարձր ու անմատչելի քարափներն են, որոնց վրա շարվել են բուրգաձև պարսպի հաստ ու բարձր պատերը: Ներսում մնում են միջնաբերդի, ջրավազանների, բնակելի շենքերի հետքերը:

Ժամանակի սղության և ուշ լինելու պատճառով Սմբատաբերդ չբարձրացանք:

Ցախաց Քարի վանքը իր համալիրով ամբողջությամբ դիտելուց և հանգստանալուց հետո, պատրաստվեցինք իջնել:

Կես ժամից արդեն լեռան ստորոտում էինք: Լեռը մեր հանգստավայրից բաժանում էր մի գետակ, որն արևի շողերից ոսկեփայլ գոտու էր նմանվել:

Երեկոյան նստեցինք մեքենաները և ուղղվեցինք դեպի Եղեգնաձոր՝ շրջկենտրոն՝ հյուրանոցում գիշերելու համար:

Հյուրանոց հասնելուն պես, արդեն բավականին հոգնած, պառկեցինք հանգստանալու:

Շրջապտույտի վերջին՝ հինգշաբթի օրը, առավոտյան, նախ այցելեցինք Արենիի ս. Աստվածածին եկեղեցի, որը կառուցվել է 1321 թվականին, Ամաղուի Նորավանքի վանահայր Հովհաննես եպիսկոպոսի օրոք, Մոմիկ ճարտարապետի նախաձեռնությամբ: Եկեղեցին ներսի ու դրսի կողմից հարուստ էր բարձրաքանդակներով և ճարտարապետական նուրբ դրվագներով, որոնցից ուշագրավ էր արևմտյան կողմում, բարավորի վրա, քանդակված Աստվածամոր պատկերը:

Հետաքրքիր էին եկեղեցու բակում գտնվող դամբանաքարերը՝ սյուժետային պատկերներով, որտեղ պատկերված էին մարդիկ, կենցաղային իրեր, աշխատանքի գործիքներ և կենդանիներ: Կային նաև 5—6-րդ դարերի հնագույն խաչքարեր, որոնք աչքի էին ընկնում իրենց պարզ, անպաճույճ ձևերով: Դրանք պատկերում էին երեք միաձուլված խաչեր՝ խորհրդանշելով «միասնական սուրբ Երրորդություն»:

Հերթական պրպտումներից և առավոտյան աղոթք կատարելուց հետո, ճանապարհվեցինք դեպի թուրքաբնակ Ամաղու գյուղ, որտեղից մոտ երեք կիլոմետր քայլելով պետք է գնայինք դեպի Նորավանք, որը գտնվում էր ձորով սահմանազատված մի լեռան լանջին, բարձունքի վրա:

Վանքը առաջին հայացքից մեր բոլորի վրա մեծ տպավորություն թողեց իր հրաշագեղությամբ: Նորավանքն իր կազմի մեջ մտնող ինքնատիպ հուշարձաններով կառուցվել է ԺԳ—ԺԴ դարերում, Վայոց ձորի տեր Օրբելյան իշխանների կողմից:

Հուշարձանախումբը բաղկացած էր երկու եկեղեցիներից, գավթից ու տոհմական դամբարանից, ինչպես նաև բարձրարվեստ խաչքարերից, իսկ այդ բոլորը շրջապատված էին պարիսպներով:

Վանքի ամենահին եկեղեցին ս. Կարապետն է, կառուցված 1221—1227 թվականներին, Էլիկումի որդի Լիպարիտ Օրբելյանի կողմից: Ոչ մեծ չափերի գմբեթավոր սրահ է, չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով:

1261 թվականին Սմբատ Օրբելյան իշխանը սրա արևմտյան կողմից կառուցել է տալիս մի անկյուն, թաղածածկ գավիթ, որը նախօրինակը չունի իր ձևի մեջ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ կամ Օրբելյանների տոհմական դամբարանը, որ կից է գավթին նրա հյուսիսային կողմից, կառուցվել է 1275 թվականին, Տարսայիչ Օրբելյան իշխանի կողմից: Վերջինս իր տոհմի այլ ներկայացուցիչների հետ թաղված է այստեղ:

Ս. Աստվածածին եկեղեցին, որը 1339

թվականին Մոմիկ ճարտարապետին կառուցել է տալիս Բութել Օրբելյան իշխանը, հանդիսանում է Նորավանքի զարդը և հայկական միջնադարյան ճարտարապետության «կարապի երգը»: Միևնույն ժամանակ այն հանդիսանում է նոր տիպի, կրկնահարկ դամբարան-եկեղեցիների լավագույն նմուշը:

Հայ արվեստի պատմության մեջ հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում գավթի և ս. Աստվածածին եկեղեցու մուտքի բարավորներին տեղավորված թեմատիկ բարձրաքանդակները, ինչպես նաև խաչքարերը:

Գավթում, պատերի տակ, կային տեղադրված Մոմիկ ճարտարապետի ձեռքի արգասիքը հանդիսացող հիասքանչ «սեղանագործ» խաչքարեր, որոնցից մեկը, և կարելի է ասել ամենագեղեցիկը, ցավով պետք է նշել, կոտրվել էր: Հետաքրքիր էր այդ խաչքարի վերին մասի քանդակը, որտեղ պատկերված էր Քրիստոսը, ձեռքին մի մագաղաթ, որի վրա փորագրված էր «Ես եմ լոյսն աշխարհի...» բառերը, իսկ նրա չորս կողմերում՝ ավետարանիչների խորհրդապատկերները (հրեշտակ, արծիվ, ցուլ և առյուծ):

Նորավանքում հետաքրքիր էր այն, որ տղաները մի քանի կոտրված խաչքարեր հավաքեցին և զգուշությամբ ու խնամքով տեղադրեցին գավթի պատի տակ:

Այսպիսով Ամաղուի Նորավանքի ճարտարապետական հուշարձանները անջնջելի տպավորություն թողեցին մեզ վրա:

Վանքը խոսում էր մեր հոգուն, և դժվարությամբ բաժանվեցինք նրանից:

Զորում ճաշելուց հետո, բարձրացանք գյուղ և, նստելով մեքենաները, ուղևորվեցինք դեպի Էջմիածին, դեպի Մայր Աթոռ:

Շրջապտույտն արդեն ավարտվել էր: Էջմիածինը մեզ էր կանչում:

Երեկոյան ժամը 20-ն էր, երբ հասանք Էջմիածին: Մոտենալով վանքի դարպասներին, սկսեցինք երգել «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, իսկ դարպասներից ներս մեզ էր սպասում եկեղեցին, որի գմբեթները դեպի երկինք իրենց սլացքի ու խոյանքի մեջ քարացած աղոթքներ են, հավատի արտահայտություն և վկայությունը ինչպես Քրիստոսի կյանքի հավիտենականության, այնպես էլ հայ ոգու անպարտելիության գաղափարի:

ՎԱՀԱԳՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ